



10.56737/2953-7843-2023.09-68

Տ. ԱԹԱՆԱՍ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱՆՅԱՆ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԴԵՔԻԱԹՆԵՐ՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական բանահյուսությունն իր հարուստ ժառանգությունամբ դարերի խորքից մեզ է փոխանցում մեր հին հավատալիքները, ներկայացնում նախնիների նիստուկացը, արժեհամակարգը, երեւակայությունները, ապրումները, պատմությունն ու արվեստը, որոնք մշտապես զուգակցված են եղել կրոնական հավատալիքների հետ: Ազգային բանահյուսության ուսումնասիրությունը կարելու է՝ ճանաչելու համար տվյալ տարածաշրջանի բնակիչների հոգեկերտվածքն ու մտածողության առանձնահատկությունները, ապրելակերպն ու տեղական սովորույթները: Այն արտացոլում է մշակույթն ու արժեքային հայեցակարգն իրենց ամբողջականության մեջ, որոնցից անբաժան է նաեւ ժողովրդի կրոնադիցաբանական ընկալումների համակարգը: Բանահյուսությունը հայոց բազմադարյան պատմության եւ ժողովրդի անցած տարաշերտ կյանքի վկայությունն է, ժամանակների վավերագիրը, որոնցով սերունդներն են կրթվում, եւ հարստանում է կենդանի լեզուն²:

Մեզ ավանդված ժողովրդական ստեղծագործություններում իր ուրույն տեղն ունի Արցախի բանահյուսությունը, որի հավաքագրման առաջին փորձերը ԺԹ. դարի երկրորդ կեսին կատարել են Առաքել, Ալեքսանդր, Դրիգոր Բահաթրյանները³: Նրանք Շուշիում գրի են առել հե-

¹* Ստացվել է՝ 18.07.2023, գրախոսվել է՝ 26.08.2023 էլ. հասցե՝ fr.atanas@gmail.com:

² Տէս Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Երկերի ժողովածու, հտ. 4, Երեւան, 1951, էջ 102, նաեւ՝ Մ. ՆԱԲԱՆԳՅԱՆ, Հրապարակախոսական երկեր, Երեւան, 1987, էջ 257:

³ Դրանք պահվում են Հայաստանի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում եւ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի

քիաթներ, զրույցներ, զավեշտական մանրապատումներ, խաղիկներ՝ մոռացումից փրկելով բանարվեստի այդ նմուշները: Այդ գրառումներում, ինչպես նշում է Արցախի պետական համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, լեզվաբան Արմեն Սարգսյանը, առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են⁴:

Հեքիաթներն առհասարակ արձակ, չափազանցություններով ու այլաբանություններով համեմված պատմություններ են, որոնցում առկա են բանահյուսական կերպարներ, եւ որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է իր նվիրական երազանքներն ու ցանկությունները՝ քողարկված եւ մտացածին բազմակերպ պատկերների միջոցով. «Հաքյաթեն ամենը սոտ պանէր ա, ուրուր քցած, էրկանացրած»⁵: Թեպետ կան հեղինակային հեքիաթներ, բայց հիմնականում հեքիաթներին ծնունդ տվողը ժողովուրդն է: Գերբնական ուժերի հանդեպ նախնական հավատն ընկած է հեքիաթի հիմքում, եւ հենց այդ սաղմից էլ առաջացել է ժողովրդական վերացարկված պատմությունը՝ կրոնաառասպելական մտածողության խտացումներով⁶:

Սույն հոդվածի համար բնագրային հիմք են ծառայել Ա. Սարգսյանի 1992–2014 թթ. ընթացքում հավաքած բանահյուսական նյութերը, որտեղ ներկայացված հեքիաթները, ինչպես նշում է բանահավաքը, հասարակական եւ տնտեսական փոփոխություններով պայմանավորված, զարգացման հեռանկարներ չունեն եւ աստիճանաբար մոռացության են տրվում:

Նյութերը մեջբերված են առանց բնագրային փոփոխությունների, եւ խստորեն պահպանված են բարբառային տառադարձությունները:

Թանգարանի հեղինակային ֆոնդում: 1882 թ. Վաղարշապատում բանահավաք Տիգրան Նավասարդյանը դրանցից որոշները հրատարակել է արժեքավոր բանահյուսական ուրիշ նմուշների հետ մեկտեղ (Տ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 8, 9, 10, Թիֆլիս, 1894, 1902, 1903): Ամբողջությամբ տպագրվել է տասնամյակներ անց միայն (Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. 6, Երեւան, 1973):

⁴ Տե՛ս Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Արցախի բանահյուսությունը, Երեւան, 2015, էջ 11 (այսուհետեւ՝ Արցախ): Նույն հեղինակը «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի 7-րդ հատորում նույնպես ընդգրկել է հեքիաթները (Ստեփանակերտ, 2022):

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. 6, Ե., 1973, էջ 706:

⁶ Տե՛ս է. ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ, Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, Արցախի ժողովրդական հեքիաթների ճանաչողական դաստիարակչական արժեքը, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հումանիտար գիտություններ, 1, 2016, էջ 246:

* * *

Աստված—մարդ փոխհարաբերության մեջ Աստծուց օգնություն հայցելու տարրն առկա է նաեւ արցախյան հեքիաթների գործող անձանց խոսույթում: Եթե Հովհ. Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթում անձն իր ձախողություններին վերջ տալու համար փնտրում է իմաստունին եւ նրանից է խորհուրդ առնում, ապա արցախյան «էյնա Բունիզի» հեքիաթում մարդը գնում է Աստծուն որոնելու, նրան գանգատվելու եւ իր աղքատությանը վերջ տալու համար նրանից խորհուրդ հարցնելու. «Մին օր էտ մարթը կըգնըվես ա, վօրօշէս՝ քյինի Ըստուծէն կօխկը կյէնգյատ: Հըղէյա ընդգընէս քյիս: Շատ ա քյիս, խըրէգյ ա քյիս, հըսնէս ա Ըստուծէն կօխկը: Նըստէս ա Ըստուծէն ուրան սաղ կյանքը պըտմէս... Աստված տըսնաս ա, վէր էտ մարթը դուզ ա խուսէս, վօրշօէս ա տըրան քյէմագյ անէ...»⁷: Այս հեքիաթում Աստված ներկայացված է լսողի, գթացողի կերպարով, Նա օգնում է մարդուն, ընդառաջում է նրա խնդրանքին, ցույց է տալիս այն ճանապարհը, որը տանում է դեպի բարեկեցություն, հարստություն, սակայն մարդն իր մտավոր տկարության, միամտության պատճառով ձախողում է: Աստված ցույց է տալիս կյանքի եւ մահվան, բարու եւ չարի ճանապարհները, սակայն դրանց միջեւ ընտրությունը թողնված է իր պատկերակից մարդ արարածին⁸, իսկ բարու ընտրության մեջ ամուր մնալու համար անհրաժեշտ է աղոթքով դիմել Ամենակալին՝ խնդրելով ցույց տալ իր շավիղները⁹: Այս հեքիաթի կրոնախրատական ուղերձն այն է, որ Աստված կարեկից է նրան, ով փնտրում ու խնդրում է Իրեն, բայց Աստված ոչ թե նվիրում է մարդու խնդրած նյութական բարիքը, այլ ցույց է տալիս այն ճանապարհը, որով ընթանալով մարդը կարող է այն ձեռք բերել եւ «տյըրա հէտէյէլ սաղ կյանքը հարուստ, լավ ըպրէս ա»¹⁰:

«Վըէսկէ խընծօրը» հեքիաթում ներկայացված է մի տարածված պատմություն, որը հանդիպում է ինչպես հայկական, այնպես էլ օտար

⁷ Արցախ, էջ 77:

⁸ Մարդու ազատ կամընտրության եւ բանականության շնորհիվ Աստծուն պատկերակից լինելու մասին մեր եկեղեցու եռամեծար վարդապետ Սբ. Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ դարձեալ՝ զի ամեն բանական՝ ի հարկէ անձնիշխան է, զի ընդ բանականութեանս ի ներքս եմուտ եւ անձնիշխանութիւն: Զի բանիւ խորհիմք եւ ընտրեմք զբարիս եւ զչարս: Արդ զորս խորհիմք եւ ընտրեմք, իշխան եմք գործելոյ. ապա թէ ոչ՝ ընդ վայր խորհեաք: Ապա ուրեմն զի բանական եմք, ի հարկէ եւ անձնիշխան պարտիմք լինիլ» (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱԳԻ, Գիրք քարոզութեան որ կոչի Զմերան հատոր, Կ. Պօլիս, 1740, էջ 425):

⁹ Տէս Սաղմ. ԻԴ. 4:

¹⁰ Արցախ, էջ 79:

հեքիաթներում. թագավորն ու երեք որդիները, որոնք պայքարում են բացասական ուժի, թշնամու կամ դուշագնական կերպարի դեմ, եւ գրեթե միշտ չարին հաղթում է կրտսեր որդին կամ հեքիաթի կերպարներից ամենից երիտասարդը: Այս հեքիաթում կրտսեր որդին սպանում է դեւերին¹¹, իսկ միջնեկ եւ ավագ որդիները թագավորին ստում են՝ ասելով, որ իրենց եղբայրը մահացել է: Այստեղ ներկայացվում է, թե ինչպես է հանուն հարստության եւ իշխանության եղբայրը եղբոր դեմ դուրս գալիս: Այս դրվագը մեզ հիշեցնում է Հակոբի եւ նրա որդիների մասին Մենդոց գրքում առկա պատմությունը, թե ինչպես Հովսեփին վաճառած եղբայրները հոր առջեւ իրենց եղբոր իսկության մասին ստում են՝ նրան ներկայացնելով գազանակուր եղած¹²: Մեջբերվող հատվածն սկսվում եւ ավարտվում է Աստծու մասին հիշատակումներով: Սկզբում առկա է գանգատ եւ բողոք Աստծուն առ այն, որ այս աշխարհում հաճախ բարուն հակառակ երեւոյթներ են տեղի ունենում, եւ Նա լավին տանում է՝ վատին թողնելով երկրի վրա, իսկ վերջում՝ հակառակը. անհնարին է համարվում, որ Աստված թույլ տա բարու խորտակումը. «Հատե՛ք ըտի յա, մատաղ անիմ, ախշարքըս հունցը ծօռ իլալ ա, ընդի ծօռ էլ քյինական ա, Աստծուծ էլ ա մին մին թարս պէնէր փըռէս, լլավէն դըղէս, փիսին յըղէս: Թամահը փիս պէն ա, հըրըստօթունը փիս պէն ա, ըտըրանց դարդան մարթ ուրան հալալ ախպօրըն էլ բագա կըտա, հունց վէր թաքավէրին մըլէծ ա, մին ա, ըշտըղա վէրէ յա, մին լուս ա ծիքյիլական, մին ա, հինչ էլ ինի, Աստուծ թուղլական չի, վէր տաշած քարը տափէն մընա, թուղլական չի, վէր պարին խուրտակվէ, չարը յըլէխնէ»¹³: Այս հեքիաթում Աստծու անունը հիշատակվում է եւս երկու անգամ՝ նույնանման արտահայտ-

¹¹ Դեւերը, քաջքերը կամ վիշապները ժողովրդական բանահյուսության մեջ շարը ներկայացնող կերպարներ են: Հեթանոսությունից քրիստոնեության դառնալուց հետո հայ ժողովրդական կրոնադիցաբանական ընկալումները փոփոխություններ կրեցին, ավելի խառն ու միակցված բնույթ ստացան: Դա վերաբերում է նաեւ դեւերի կերպարափոխությանն ու ընկալմանը, ինչպես բացատրում է Կ. Մելիք-Օհանջանյանը. «Դեւը հին հայերի հեթանոսական կրոնում բարի աստվածություն է, քրիստոնեության մեջ՝ չար ոգի, հրեշ, հսկա» (տե՛ս Կ. Մելիք-Օհանջանյան, Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ, Երեւան, 2008, էջ 530):

¹² Տե՛ս Մենդ. Լէ.: Թագավորի եւ նրա երեք որդիների, ինչպես նաեւ Հակոբի եւ տասներկու որդիների պատմությունների աղբյուրները տարածված են արցախյան այլ հեքիաթներում նույնպես: Դիցուք, «Նամարդ եղբայրները» հեքիաթը, որտեղ հիշատակվում է ջրհորը, ուր նետել են փոքր եղբորը (տե՛ս Բանահյուսություն Արցախի, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի ֆոնդ, FFIX, 1895–1909):

¹³ Արցախ, էջ 85:

չականությունը, «Աստուծո, տըէսէ՛ր կուօխըս հինչ պէրէր»¹⁴, «Աստուծ, պայըէս մին պառավ, քյասիբ մարթ, յըէս ըտի պէն տըէսած էլ չըմ, յըէս հինչ ա՛նիմ, կուօխըս կըկըտրին»¹⁵: Երկու տեղիներում էլ Աստծուն ուղղված անհատի մտորումներն են, որոնք արտահայտում են հուսահատության, անելանելիության իրավիճակում Աստծուն ուղղված մարդկային խնդրանքներ: Արցախյան ասուլթաբանության մեջ նմանեանք արտահայտությունները հանդիպում են նաեւ առօրյա խոսույթում, եւ բնական է, որ դրանք ներթափանցել են նաեւ հեքիաթներ:

Հետաքրքիր մի արտահայտության ենք հանդիպում «Լյըվութունը կօրչիլ չի» հեքիաթում: Պատմվում է, որ լինում է, չի լինում հարուստ, հաջողակ մի թագավոր է լինում, որն օրերից մի օր հիվանդանում է, իսկ «Ամմա դէ Աստուծ դարդը վէր տաս ա, վէշ մին պէնու յիշիս չի, ուրան օգածը ընէս ա»¹⁶: Այստեղ Աստված ներկայացվում է որպես ցավերի ու տառապանքների առաջացման պատճառ, սակայն այն մարդկային մեղսագործության հետեւանք է¹⁷: Ներկայացվող շարակարգում ցավը մի հիվանդություն է, որը վրա է հասնում թագավորին: Նրա կերպարը ներկայացված է դրական հատկանիշներով, ուստի անտրամաբանական պետք է համարել՝ կարծելով, որ այս հիվանդությունը թագավորի պատիժն է. դա նրան բաժին հասած փորձությունն է՝ հոգեւոր կյանքի բացակայության հետեւանք¹⁸: Վերոգրյալ մեջբերումը, թե Աստված ցավ է տալիս, ճիշտ համեմատական է մարդկանց կողմից հաճախ կիրառվող «Աստված փորձություն է տալիս» արտահայտությանը, հետեւաբար հե-

¹⁴ Անդ, էջ 87:

¹⁵ Անդ, էջ 89:

¹⁶ Անդ, էջ 92:

¹⁷ Դրախտից արտաքսումը, որը հետեւանք էր մարդու անկման, ուղեկցվեց աստվածային պատժիչ խոսքերով: Կնոջն ասաց. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները: Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, եւ նա պիտի իշխի քեզ վրա» (Մննդ. Գ. 16): Այնուհետեւ Տերը դիմեց Ադամին. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին» (Մննդ. Գ. 17): Մեղանշմամբ մարդկային ցեղը ենթակա դարձավ ապականության եւ մահվան, որի իշխանությունից մարդկությունն ազատագրվեց Հիսուս Քրիստոսի քավչարար արյան հեղմամբ, որով բժշկելի եւ հաղթահարելի դարձան մարդկային տառապանքները (տես PAUL S. FIDDES, *The Creative Suffering of God*, Oxford, 1992, էջ 110):

¹⁸ Մարդկային ցավն ու տառապանքը որպես Աստծուց օտարվելու հիմնական աղբյուր եւ հետեւանք է ներկայացնում Լատին եկեղեցու աստվածաբանության հայր Օգոստինոս Երանելին. «Ուր էլ դառնա մարդու հոգին, բացի քեզանից ամենուր ցավի դեմ կառնի, նույնիսկ եթե գեղեցկության հանդիպի, որ քեզանից դուրս է» (տես Օգ. ԵՐԱՆԵԼԻ, *Խոստովանություններ*, Երեւան, 2002, էջ 25):

քիաթում առկա միտքը վերցված է առօրյա խոսույթից՝ արտահայտելով հասարակական-կրոնական մտայնության մի դրսեւորում:

«Հազգարան բըլբուլը» հեքիաթում Աստծու անվան երեք հիշատակություն է հանդիպում, որոնցից առաջինը պատկանում է բանահյուսության ասույթաբանական տեսակին եւ կիրառվում է որպես անեծք: Պատմվում է, որ իր այգում զբոսնող թագավորին է մոտենում տարեց կինը եւ խնձորենուց մի պտուղ խնդրում, որպեսզի իր ծերունի ամուսինը «օտէ, ըշխարքաս խըռավ չի քյինի»¹⁹: Թագավորը բարկանում է եւ նրան դուրս վռնդելով՝ ասում. «Ըռաղ՝ իլ կօրչի, ա՛քավթառ, տուք նա քու մարթըտ իքյ պակաս, վէր իմ բաղաս նուբար անիքյ»²⁰: Պառավն անիծում է թագավորին հետեւյալ խոսքերով. «Ըստուծանա յըմ օզյալ, քու վաղըտ հանց չուրանա, հանց խըզուզուն տըէռնա, վէր մընաս մին վըէրթնած բարու հասարթ»²¹, այսինքն՝ «Աստծուց ուզում եմ, որ քո այգին այնպես չորանա, որ չորացած փայտ դառնա, որ անգամ մի որդնած բարիքի կարոտ մնաս»: Այնուհետեւ պատմվում է, որ պառավի անեծքի համաձայն՝ այգին չորանում է: Ասույթաբանական բանահյուսության մեջ անեծքներն առավելապես հնչում են տարեցների, իմաստուն ծերերի շուրթերով, եւ գրեթե չկան դեպքեր, երբ անիծողը երիտասարդ է: Աստվածաշնչում նույնպես հանդիպում ենք մի անեծքի, որի հետեւանքը ծառի չորացումն է: Մատթեոս եւ Մարկոս ավետարանիչները ներկայացնում են մի դրվագ, որտեղ Հիսուս Քրիստոս քաղց է զգում, ճանապարհին մի թզենի է տեսնելով՝ մոտենում է, սակայն ճյուղերին, տերեւներից զատ, ոչինչ չի գտնում եւ անիծում է թզենուն, որը նույն պահին չորանում է²²: Հեքիաթում եւ Ավետարանում հնչող անեծքների միջեւ կան պատճառահետեւանքային նմանություններ. հեքիաթում ներկայացվում է բերրի խնձորի այգի, իսկ Ավետարանում՝ անպտուղ թզենի, բայց երկուսի դեպքում էլ ցանկությունը ծառի բարիքներից օգտվելն է եւ երկուսի դեպքում էլ այն չի իրականանում, քանի որ, ինչպես պատմվում է հեքիաթում, այգու տերը թույլ չի տալիս, իսկ Ավետարանում ծառն անպտուղ էր: Այնուհետեւ երկու տեղիներում էլ հնչում են անեծքներ, եւ եթե հեքիաթում մարդը դիմում է Աստծուն, որպեսզի ծառերը չորանան,

¹⁹ Արցախ, էջ 111:

²⁰ Անդ, էջ 111:

²¹ Անդ, էջ 111:

²² Տե՛ս Մատթ. ԻԱ. 18–19, Մարկ. ԺԱ. 12–14, 20–21:

ապա Ավետարանում հենց Աստված էր ծառը չորացնողը: Վերջնարդյունքում երկու դեպքում էլ ծառերն անմիջապես չորանում են: Հեքիաթում, ինչպես արդեն նշեցինք, Աստծու անունը հիշատակվում է նաեւ ուրիշ երկու տեղ: Երբ անեծքից հետո այգին չորանում է, թագավորն սկսում է հավատալ պառավի անեծքի զորությանը եւ փնտրում է այդ անեծքից ազատվելու միջոց: Պատմվում է, որ երկար որոնումներից հետո նա մի իմաստուն մարդու է գտնում, որն ասում է. «Թաքավէրըն ապրած կէնա, վէր էտ բաղումը մին մըէծ յըէխծէ շինիս, տարէն բութուն չըքըջօք մաշին աղօթկ անիս, բալի Աստուծ խընթիրյըտ կըղարէ»²³: Այս իմաստունը թագավորին խորհուրդ է տալիս եկեղեցի կառուցել, ամբողջ տարին եկեղեցում ծնկաչոք աղոթք անել, եւ միգուցե Աստված նրա խնդրանքը կատարի, եւ չորացած այգին կրկին կանաչով պատվի²⁴: Թագավորը հետեւում է իմաստունի խոսքին. առանց ժամանակ կորցնելու՝ անմիջապես հրամայում է ի մի բերել ամբողջ հարստությունը եւ դրանով եկեղեցի կառուցել: Պատմվում է, որ մեկ ամիս անց ավարտվում է շինությունը մի հոյակապ եկեղեցու, որ, կարծես, «յըրգյինքյան կաթած»²⁵: Թագավորն սկսում է ծնրադիր աղոթել Աստծուն հետեւյալ խոսքերով. «Փարքյըտ շատ ինի, Աստուծ, էտ քու զօրութունը հունց զօրութուն ա՛, վէր էն սարու նըման աժլահա թաքավէրին ըտի կօշ ըս ածալ շինալ մին մըկըծըէռնը, չուքըցըրըրալ»²⁶: Թագավորը, փառք տալով եւ դիմելով Աստծուն, ասում է, որ Նրա զորությունն այնքան զորավոր է, որ իրեն՝ սարի նման աժդահա թագավորին այնպես է խեղճացրել, ծնկի բերել, որ դարձել է մկան պես: Այս հեքիաթում կրոնական երանգավորում ունեցող դեպքերն ունեն հետաքրքիր հաջորդականություն. թագավորը մերժում է ընդամենը մեկ խնձոր խնդրող պառավին, վերջինս Աստծուց խնդրում է պատժել թագավորին, եւ անմիջապես այգին չորանում է, թագավորը զղջում է, իմաստունի խորհրդին հետեւելով՝ եկեղեցի է կառուցում եւ աղոթելով Աստծուց գթություն է հայցում: Այս կաղապարը, կարծես, հիշեցնում է ապաշխարության խորհուրդը, երբ մեղքից հետո մարդը

²³ Արցախ, էջ 112:

²⁴ Եկեղեցի կառուցելու դիմաց աստվածային բարեձիր փոխհատուցման գաղափարն առկա է նաեւ ժողովրդական առակներում, կենդանապատում հեքիաթներում (տե՛ս Ս. ՀԱՅԿՈՒՆԻ, Կենդանական վէպեր. ժողովրդական առակներ, № 6, Գէլ ու աղուէս, Վաղարշապատ, 1907, էջ 33):

²⁵ Արցախ, էջ 122:

²⁶ Անդ, էջ 122:

զղջում է, աղոթում՝ հատուցելով գործած չարիքի դիմաց: Այս հեքիաթում ալլաբանորեն ներկայացված է «մեղք–անկում–զղջում–ապաշխարություն–հատուցում» փոխկապակցված շղթան, որը ցայտուն օրինակ է, թե ինչպես է բանահյուսական տեսակի մեջ տեղ գտած գաղափարը սերտորեն առնչվում քրիստոնեական բարեկենցաղային եւ ծիսաբարեպաշտական ընկալումներին:

«Կէս հրդրցան յէտ չի տըէռնաս» հեքիաթում պատմվում է, որ մեկը երկար ճանապարհ է գնում եւ հոգնելով նստում է քարին՝ հանգիստ առնելու: Որոշ ժամանակ հետո մի ծերունու տեսնելով՝ մոտենում է եւ գիշերվա ապաստան խնդրում, որին ի պատասխան՝ ծերունին ասում է. «Համեցէ՛ք, ղօնաղը Ըստուծէնըն ա»²⁷: Այս խոսքը լավագույնս վկայում է հայի հյուրասիրության, հյուրին պատվելու սովորույթի մասին: Անծանոթ մարդուն հյուրընկալելը որոշ ազգերի մոտ ընդունված սովորությունն է, իսկ ինչ վերաբերում է անծանոթին գիշերելու թույլտվություն տալուն, ապա դրա մասին ընդհանրապես խոսք լինել չի կարող: Հյուրընկալության մշակույթը տարբեր ազգերի կենցաղում դրսևորվում է որոշակի առանձնահատկություններով. օրինակ՝ կարող ես հյուր գնալ միայն այն ժամանակ, երբ հրավիրված ես, եւ կա հստակ պատճառ, տոն, առիթ հյուրընկալվելու համար: Հյուրընկալության այս ձևը հանդիպում ենք նաեւ Աստվածաշնչում՝ Հիսուս Քրիստոսի ներկայացրած «Հարսանիքի հրավիրվածների առակ»-ում²⁸, որտեղ ասվում է, որ մի մարդ կազմակերպեց հարսանեկան խնջույք եւ իր աղախնուն ուղարկեց հրավիրվածներին կանչելու: Հստակ է, որ հայկական միջավայրում անծանոթին հյուրընկալելը, անգամ գիշերելու համար օթեւան տրամադրելը եղել է ընդունված սովորություն: Բայց այստեղ ուշադրության է արժանի «ղօնաղը Ըստուծէնըն ա»՝ հյուրն Աստծուց է տրված, Աստծուց է ուղարկված արտահայտությունը:

Նախաքրիստոնեական Հայաստանում տարածված էր Վանատուրի պաշտամունքը, որը հայկական դիցաբանության մեջ համարվում էր հյուրընկալության շատվածը, օտար ճամփորդների, պանդուխտների հովանավորն ու նրանց ապաստան տվողը: «Վանատուր» բառը կազմված է «վանք», «վան»՝ բնակ, բնօրրան, տուն-տեղ, եւ «տուր», «տալ»

²⁷ Անդ, էջ 124:

²⁸ Մատթ. ԻԲ, 1–14, Դուկ. ԺԴ, 15–24

բառերից, այսինքն՝ հյուրընկալ, հյուրասիրություն ցույց տվող, պարգևող²⁹։ Վանատուրի տոնը նշվել է հին հայոց տարեգլխի՝ Ամանորի առաջին օրը, որի համար հաճախ նրան անվանել են Ամանորյա դից։ Նավասարդ ամսվա մեկին ժողովուրդը հավաքվել է Բագրեւանդ գավառում գտնվող Բագավանի տաճարում ու Վանատուրին նվիրված շրջակա օթեւաններում, եւ մեծ շուքով նշել են Վանատուրի տոնախմբությունը։ Կարծիքներ կան, թե Վանատուրն ու Ամանորը միասնական շաստվածություն էին. Վանատուրն Ամանոր շաստծու մակդիրն է եւ նշանակում է օթեւան տվող, հյուրընկալ Ամանոր³⁰։ Վերոշարադրյալ հեթանոսական ավանդույթը չենք կարող որպէս հիմնավորում ընդունել եւ փաստել, որ «ղօնաղը Ըստուծէնըն ա» խոսքը ժողովրդի մեջ արմատացել ու դարձել է հյուրին պատվելու, օթեւան տալու ընկալումների հիմքը, քանի որ, ինչպէս նշեցինք, սա եւս պատկանում է հյուրընկալման այն դրսեւորմանը, ըստ որի՝ կար պատճառ, տոնական առիթ որեւէ մեկին հյուր ընդունելու համար։ Հեթանոսական այս տոնը խոսում է այն մասին, որ կար տարվա մեջ մեկ օր, երբ բոլորը ճամփորդության էին մեկնում Բագրեւանդ, օթեւանում էին այնտեղ, մասնակցում տոնակատարություններին։ Եւ եթե տեղի բնակչության համար այդ օրը կամ օրերը առնչվում էին հյուրընկալության, օթեւան տալու հանգամանքների հետ, ապա դա չի նշանակում, որ վերելում հիշված «ղօնաղը Ըստուծէնըն ա» արտահայտությունն ունի հեթանոսական նախահիմք։ Մշակութային առանձնահատկությունն ու ժողովրդի բնավորությունը ստուգապէս հասկանալու համար անհրաժեշտ է նկատի առնել ժամանակի կրոնական ընկալումները, այս դեպքում՝ քրիստոնեական արմատացած հստակ պատկերացումները՝ խուսափելով տարածված համաձուլյ փոխառնչություններից։ Հին Կտակարանում կարդում ենք, որ Աստված Աբրահամին երեւաց, երբ նա նստած էր իր վրանի մոտ։ Նա բարձրացնում է աչքերը եւ իր դիմաց տեսնում երեք տղամարդկանց, ընդառաջ է գնում, խոնարհվում, ապա լվանում նրանց ոտքերը, ապա կնոջը՝ Սառային, հրահանգում է նկանակ պատրաստել, իսկ ինքը մի մատղաշ հորթ է մորթում, տալիս ծառային, որ կերակուր պատրաստի³¹։ Նոր Կտակարանում հանդիպում ենք հյու-

²⁹ Տէս Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, Երեւանի պետական համալսարան, Երեւան, 1962, հտ. Ե., ցուցակ 1, էջ 36։

³⁰ Տէս Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ հին վիպաշխարհը, Երեւան, 2004։

³¹ Տէս Ծննդ. իԸ. 1–8։

ըրենկալուծյան մի օրինակի, երբ Հիսուս մտնում է Երիքով եւ մարդկանց բազմության միջից դիմում է Զաքեոս անունով մաքսապետին՝ ասելով. «Այսօր պետք է, որ ես քո տանը գիշերեմ», իսկ Զաքեոսը Տիրոջ խոսքին արձագանքում է մեծ ուրախությամբ³²: Աստվածաշնչյան այս երկու տեղիներում հստակ տեսնում ենք, որ երկու դեպքում էլ հյուրն Աստված էր, եւ երկու դեպքում էլ հյուրընկալությունը չի կատարվում որեւէ տոնի կապակցությամբ: «Կէս հըղըցան յէտ չի տըէռնաս» հեքիաթում անծանոթի «Կյամ տանըտ մին քըշէր կէնամ»³³ խնդրանքին ծերունու դրական պատասխանի՝ «ղօնաղը Ըստուծէնըն ա»³⁴ խոսքի լավագույն օրինակներն Աստվածաշնչում են: Ուստի կարող ենք եզրակացնել, որ անծանոթի՝ Աստծուց ուղարկված լինելը եւ դրանով պայմանավորված՝ նրան հյուրընկալելը ժողովրդի մտածողության եւ մշակույթի մեջ արմատացել են քրիստոնեական արժեքների հիման վրա:

«Թաքավէրէն արազը» հեքիաթում պատմվում է այն մասին, որ թագավորն ամեն օր տեսած իր «ըրազըմը միշտ Աստված կյամ ա ըտըրան հըրցընում, թա. – Օգյում ըս ջահիլ վախտըտ լյավ ապրէս, թա ահիլ»³⁵: Որոշ ժամանակ անց թագավորը որոշում է պատասխանել Աստծուն՝ ասելով. «Վար օգյում է ահիլ վախտը լյավ ապրէ, քանի վէր հինչքան ջահիլ է, կըկարէ ամէն փիս պան տանէ, ամա ահիլ վախտը էլ կըրիլան չի տիժըրութանը տամ կէնա»: Այդպես էլ լինում է, եւ թագավորը կորցնում է իր ողջ հարստությունը՝ դառնալով մի աղքատ մարդ, իսկ հեքիաթի վերջում, Աստծու խոսքի համաձայն, կրկին հարստանում է եւ բազմում գահին: Այս հեքիաթի երկու գլխավոր կերպարներն են թագավորն ու Աստված, եւ եթե փորձենք ընկալել, թե որոնք են այս հեքիաթի ասելիքն ու բարոյախրատական, դաստիարակչական պատգամը, ապա կարող ենք արձանագրել, որ այս գործը եւս խորքում պարունակում է կրոնական գաղափարներ: Աստծու հարցին ի պատասխան՝ թագավորը մտածում է, որ քանի դեռ երիտասարդ է, կարող է բոլոր դժվարությունները հաղթահարել, փորձություններն ու զրկանքներ կրել, աղքատության մեջ ապրել, իսկ ծերության օրերին այդ ամենի հաղթահարումն այլեւս անկարելի կլինի: Թագավորը, առանց Աստծու խոսքի

³² Տէս Դուկ. ԺԹ. 1–10:

³³ Արցախ, էջ 124:

³⁴ Անդ, էջ 124:

³⁵ Անդ, էջ 127:

հանդեպ երկմտության, հավատում է, որ եթե այսօր նեղություն կրի, ապա ծերության ժամանակ անհոգության մեջ կապրի: Այստեղ կարծես մեր առջեւ պատկերվում է քրիստոնեական այն գաղափարը, որ այսօրվա նեղությունների դիմաց վաղը վարձատրություն ենք ստանալու, իսկ աղքատությունն ընտրելով՝ գալիք կյանքում Աստծուց մխիթարություն ենք ստանալու՝ Հիսուս Քրիստոսի Լեռան քարոզում ներկայացված Երանինների օրինակով³⁶:

Արցախյան մեկ այլ հեքիաթում ոչ միայն գտնում ենք մեջբերումներ Աստծու մասին, այլև հենց Աստված է ներկայացված իբրեւ գլխավոր: Հեքիաթը կոչվում է «Աստուծ գլիղում ա՝ հինչ ա անում», այսինքն՝ «Աստված գիտի, թե ինչ է անում»: Պատմվում է, որ մի աղքատ, խեղճ մարդ կյանքի մայրամուտին կանչում է իր երեք որդիներին եւ ասում, որ գնան աշխատանք որոնեն, իրենց գլխի ճարը տեսնեն, քանի որ ինքն այլեւս չի կարող աշխատել, ծերացել է, եւ իրեն հաշված օրեր են մնացել: Որոշ ժամանակ հետո նա օրհնում է որդիներին եւ կնքում մահկանացուն: Որդիները սգում են հոր մահը, կազմակերպում թաղման ծեսը, իսկ քառասունքից հետո ճամփա են ընկնում՝ աշխատանք գտնելու նպատակով: Ճանապարհին մի աղբյուր են տեսնելով՝ մոտենում, ջուր են խմում, ապա նստում են, բացում հացի կապոցները: Այդժամ, նկատելով աղբյուրի մոտ կանգնած սպիտակ մորուքավոր ծերունուն, հրավիրում են, հյուրասիրում եւ պատմում են իրենց կյանքի պատմությունը: Ծերունին երկար լսելուց հետո հարցնում է, թե ինչ գործ կցանկանան ունենալ, որին ի պատասխան՝ ավագ եղբայրն ասում է, որ կուզեր իրենց դիմացի սարի քարերը ոչխարներ դառնային, իսկ ինքը լիներ նրանց հովիվը: Ծերունին մորուքից մի սպիտակ մազ է պոկում, եւ նույն պահին քարերն սպիտակ ոչխարների են փոխակերպվում: Նույն կերպ միջնեկն է իր ցանկությունը հայտնում, որին համապատասխան՝ ամալի դաշտը վերածվում է խաղողի այգու: Կրտսեր եղբայրն ասում է, որ շատ բան չի ուզում, այլ միայն մի փոքրիկ տնակ՝ իր այգու, եւ մի աղջիկ, որի հետ կամուսնանա եւ իր տուն-տեղը կզնի: Կրտսերը նույնպես ստանում է իր ցանկացածը, բայց նույն պահին եղբայրները տեսնում են, որ ծերունին այլեւս չկա. «Տու մէլ ասէլ, էտ մարթը Աստուծ ա իլալ, քըշացալ ա տըէսնա՝ մարթիքյ հունց ըն ապրում, համ էլ էտ տըղօցը ջըհալ, ըտի լըվօթուն ըրալ, էլհա պիցըրաց

³⁶ Տես Մատթ. Ե. 3–12, Ղուկ. Զ. 20–23:

յէրգիրնքը»³⁷: Անցնում են ժամանակներ, եւ մի օր Աստված ասում է. «Պալհա տահանց հրէտէ էտքան լըվօթուն ըրէ, մին քյինամ փօրցիմ տրէսնամ՝ հունց մարթիք ըն»³⁸: Այստեղ տեղին է մեջբերել սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքը. «Ողորմություն տվողին ձեռք մեկնողն աղքատ մուրացկանն է, բայց ողորմություն առնողը՝ Աստված»³⁹: Եթե հեքիաթի սկզբում ասվում էր, որ Աստված այդ ծերունուն ուղարկել էր, որպեսզի տեսնի, թե ինչպես են մարդիկ ապրում, ապա այստեղ հստակ ասվում է, որ Աստված ինքն է որոշում գալ մարդկանց հետ հանդիպման եւ աղքատի շորեր է հագնում, ձեռքին մահակ վերցնում եւ երկնքից իջնում երկիր: Առաջինը հանդիպում է եղբայրներից ավագին եւ խնդրում է, որ մի ոչխար կթի, կաթը տա խմի, քանի որ շատ քաղցած է: Հովիվն ընտրում է ամենից կեղտոտ ոչխարը, կթում է կաթը, տալիս է ծերունուն: Իսկ երբ վերջինս հովիվին հարցնում է, թե ինչու այդ ոչխարն ընտրեց, սա կշտամբում է ծերունուն, որից հետո ամբողջ հոտը վերածվում է քարերի կույտի: Այստեղ կարծես հեքիաթի միջոցով ներկայացվում է Մաղաքիա մարգարեի այն խոսքը, թե՝ «Թող անիծյալ լինի այն մարդը, որն ունեւոր է, իր հոտի մեջ որձ ունի եւ ուխտ է արել մատուցելու, սակայն արատավորն է մատուցում Տիրոջը»⁴⁰: Այնուհետեւ Աստված գնում է միջնեկ եղբոր՝ այգեպանի մոտ՝ խնդրելով նրանից մի ողկույզ խաղող: Այգեպանը խակ խաղողի ողկույզ է տալիս ծերունուն: Վերջինիս այն հարցին, թե ինչու ոչ թե հասած, այլ խակ խաղող տվեց, միջնեկ եղբայրը հայհոյում եւ այգուց դուրս է հանում ծերունուն: Այս պատկերի նկարագրության մեջ տեսանելի է Աստծու պատվերի գործածության հակառակ դրսևորումը, թե՝ «Պատվիր Տիրոջը քո արդար վաստակից եւ քո արդար բերքից պտուղ հատկացրու նրան»⁴¹: Այդ նույն պահին ծերունին այգին վերածում է ամալի արտի, իսկ այգեպանը դառնում է արջ: Ինչպես ասում է սուրբ Հովհան Ոսկեբերանը, «նա, ով ողորմություն չի գործում, այնպիսինին Աստվածաշունչը մարդ չի անվանում, այլ՝ խոզ, շուն եւ միայն ուտող գազան»։ Քանի որ առանց լույսի ճրագ եւ առանց տեսողության աչք են բոլոր նրանք, ովքեր միայն անուն ունեն եւ ոչ մի օգտա-

³⁷ Արցախ, էջ 150:

³⁸ Անդ, էջ 150:

³⁹ Խրատանի ապաշխարության, աշխատ.՝ Ա. դպիր Արեւշատյանի, Երեւան, 2010, էջ 416:

⁴⁰ Մաղաք. Ա. 14:

⁴¹ Առակ. Գ. 9:

կարողություն: Մարդն իր ողորմության համար է, որ ճանաչվում է որպես մարդ՝ մշտապես իր սրտի մեջ սեր եւ գուրթ տածելով աղքատների հանդեպ, ձեռքերը ողորմության համար կարողությաներին երկարելով եւ անոթի աղքատների միջոցով Քրիստոսին կերակրելով, քանզի Քրիստոսն աղքատների հանդեպ ցույց տրված ընդունելությունը համարում է իրենը. «Անոթի էի, եւ ինձ կերակրեցիք, ծարավ էի, եւ խմեցրիք, օտար էի, ընդունեցիք ինձ, հիվանդ էի ու բանտի մեջ, եւ այցի եկաք ինձ»⁴²: Արդ, եթե հավատում ես Աստծու խոսքին ճշմարտապես, մտածիր Նրա մասին, որովհետեւ երբ անոթիներին կերակրես, Քրիստոսին կերակրած կլինես, եթե ծարավին ջուր տաս, Քրիստոսին տված կլինես, եթե հյուր ընդունես, Քրիստոսին ընդունած կլինես, եթե օտարին ասպնջական ոգի ցույց տաս, Քրիստոսին հյուրընկալած կլինես»⁴³: Աստված ասում է. «Հա, մինչէլ քչինամ կուճիր ախպօրը փօրցիմ, վէր էն էլ ինի սահանց նըման, էլ թօբա թա յըէս էրկուվըննանուն լլըվօթուն անըմ»⁴⁴: Աստված թակում է կրտսեր եղբոր տան դուռը, եւ այն բացում է հարսը՝ կողքին մանուկը: Աստված խնդրում է գիշերելու տեղ տալ՝ ասելով, որ խեղճ ու կրակ, անտուն մարդ է: Հարսը մանկանն ուղարկում է այգի, որպեսզի ամուսնուն կանչի, իսկ ծերունուն ասում է. «Խէ չըմ թօղել, ղօրփէր, ղօնաղը Հստուծէնըն ա, յէք, յէք նըստէ պատառ դինջաց, էս ա մարթըս էլ կըկյա»⁴⁵: Այստեղ հետաքրքիր նույնականացում ենք տեսնում «Կէս հըղըցան յէտ չի տըէննաս» հեքիաթի հետ, որտեղ նույնպես օտարը գիշերելու տեղ է խնդրում, որին ի պատասխան՝ հնչում է «ղօնաղը Հստուծէնըն ա» արտահայտությունը: Կրտսեր եղբայրը դառնում է տուն եւ ուրախությամբ ծերունուն ասում, որ կարող է ապրել իրենց հետ: Աղքատ ծերունուն կրտսերի ուրախությամբ ընդունելը հիշեցնում է սուրբ Հովհան Ոսկեբերանի այս խոսքը, թե՛ «Միայն այն ողորմությունն է ճշմարիտ, որն ուրախությամբ է տրվում»⁴⁶: Այնուհետեւ նա մի գառ է մորթում, սեղան է բացում, եւ մինչ հաց կուտեին, պատմում է իր եւ եղբայրների պատմությունը: Այս պատկերը մեզ հիշեցնում է Եսայի մարգարեի, ինչպես նաեւ Դավթի սաղմոսի խոսքերը, թե «Քաղցածներին բաժանիր քո հացը եւ

⁴² Մատթ. ԻԵ. 36:

⁴³ Խրատանի ապաշխարության, էջ 408–409:

⁴⁴ Արցախ, էջ 151:

⁴⁵ Անդ, էջ 151:

⁴⁶ Խրատանի ապաշխարության, էջ 417:

անօթեւան աղքատներին տար քո տունը»⁴⁷, «Երանի նրան, որ խորհում է տնանկի համար եւ աղքատի մասին»⁴⁸: Ապա կրտսեր որդին ասում է, որ իր սրտում մի վիշտ է մնացել, քանի որ չի կարողացել հրաշագործ ճերմակամորուսին շնորհակալություն հայտնել, եւ իր համար մեծ մխիթարություն կլինի այս խեղճ ծերունուն իր տանը պահելը: Աստված պատասխանում է, որ գործեր ունի եւ չի կարող մնալ, իրենց հետ ապրել: Գիշերը քնելուց առաջ հարսը ջուր է բերում եւ լվանում է ծերունու ոտքերը, իսկ ծերունին ապսպրում է այդ ջուրը տանել եւ լցնել թոնրի մեջ: Հարսն այդ մասին հարցնում է ամուսնուն, իսկ ամուսինը պատասխանում է, որ հարկ է անել այն, ինչ ասում է հյուրը: Առավոտյան նրանք սկսում են հաց թխել, իսկ ծերունուն խնդրում են ծառի ստվերում նստել-հանգստանալ, որպեսզի պատրաստ լինելուն պես թարմ գաթայով նրան հյուրասիրեն: Երբ բացում են թոնրի դուռը, տեսնում են՝ ամբողջ թոնիրը լցված է ոսկով: Այս դրվագն իր մեջ է ամփոփում Քրիստոսի հետեւյալ պատգամը. «Տվե՛ք, եւ պիտի տրվի ձեզ»⁴⁹: Կրտսեր եղբայրը հասկանում է, որ հրաշագործ ծերունին այս նույն մարդն է, եւ վազում է այգի, սակայն այս անգամ նույնպես ծերունին անհետացել էր: Ոսկին տանում են տուն եւ իրենց կյանքը լավ ու ուրախ ապրում, ինչպես որ Քրիստոսն է ասում. «Երանի ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն պիտի գտնեն»⁵⁰, իսկ «Աստուծ էլ տիշերան յէշում ա, հա՛մ ուրխանում ա, հա՛մ էլ ասում. — Ա՛ ժրղօվուրթ, հատէ տի յա, հու պարի, դուզէխա մարթ ա, ընդերա փայը բօլ-բօլ ում տամ, հու շընըմուրտառ, աշկը ծակ, հափուռը կապ ա, ընդերա իլածըն էլ կըտըրցընում ում»⁵¹: Այս հեքիաթը կարծես բարոյախրատական առակ լինի այն մասին, որ պետք է Աստծուն շնորհակալություն հայտնել տվածի համար, մշտապես ողորմություն անել կարիքավորներին եւ երբեք երախտամոռ չլինել: Պողոս առաքյալն ասում է. «Գնացե՛ք սիրո հետեւից, նախանձախնդիր եղե՛ք աղքատներին ողորմություն տալու մեջ, քանի որ դուք էլ Քրիստոսից պիտի ստանաք»⁵²: Հեքիաթն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ստեղծագործության գլխավոր ասելիքը հետեւյալն է. «Բարերարությունն ու կարո-

⁴⁷ Եսայի ԾԼ. 7:

⁴⁸ Սաղմ. Խ. 2:

⁴⁹ Դուկ. 2. 38:

⁵⁰ Մատթ. Ե. 7:

⁵¹ Արցախ, էջ 152:

⁵² Ա. Կորնթ. ԺԴ. 1:

տյալներին ողորմություն տալը մի՛ մոռացեք, քանի որ Աստված այսպիսի պատարագներ է հավանում»⁵³։ Ողորմություն ցուցաբերելը ոչ միայն աստվածահաստատ պատվիրան է եւ հոգեւոր բարեկրթության արտահայտչամիջոց, այլեւ աստվածային տիեզերական կարգի կարեւոր մի սկզբունք, երկնային արքայության արժանանալու ճանապարհ։ «Թէպէտ ողորմութիւնն երկրորդ ճանապարհ է արքայութեանն (առաջին ճանապարհը հոգեւոր աղոթքներն են ու անհատական ճգնությունները.— Ա. արդ. Սարգսյան), սակայն այլ ամեն առաքինութեանցն հաւասար է եւ բարձրագոյն»⁵⁴։

«Զուբանէն տըղան» հեքիաթում Աստծու մասին հիշատակություններ չկան՝ բացառությամբ վերջաբանի, որտեղ ոչ թե երկնքից է երեք խնձոր ընկնում, այլ «Ըստուծանա իրէք խընձօր ա վէր ընգնում»⁵⁵, եւ ոչ թե երեք խնձորները բաժին են հասնում երեք անձերի, այլ «գիլիմ-գիլիմ ըն անում, մինը տամ պըտմօղէն, մինը՝ ըսկընօղէն, մընացածըն էլ՝ հըրսընքըվուրնէրէն»⁵⁶։ Խնձորները ոչ թե երկնքից, այլ Աստծուց վայր ընկնելու միջեւ էական որեւէ տարբերություն առկա չէ, քանի որ երկինքը նույնանում է Աստծու օթեւանի հետ, ուստի երկու դեպքում էլ խնձորները տրվում են Աստծուց։ Այստեղ առավել հետաքրքրական է խնձորների կտոր-կտոր անելը եւ հարսանքավորներին բաժանելը, որոնք հեքիաթի գործող անձերն են։ Գրեթե միշտ հեքիաթի ավարտից հետո այս խոսքն ունի հստակ նշանակություն. հեքիաթի անիրական աշխարհից ունկնդրին փոխադրել իրականություն, որով պայմանավորված երեք խնձորները սովորաբար բաժին են հասնում պատմողին, լսողին եւ հեքիաթի հեղինակին։ Այստեղ հեքիաթի աշխարհից դեպի իրականություն փոխադրումը լիարժեք չէ, եւ բաժանված խնձորների միջոցով ունկնդիրը հեքիաթի կերպարների հետ նույնացվում է, եւ իրականության անցումը մնում է թերի։

Աստծուն ուղղված խնդրանքներ, ցանկություններ, ինչպես նաեւ գանգատներ առկա են ինչպես Արցախի ասուլիսաբանության մեջ, այն-

⁵³ Եբր. ԺԳ. 16։

⁵⁴ Գր. ՏԱԹԵՆԱՅԻ, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 375։ Տաթեւացու համար առաքինությունների «գլուխը» ողորմությունն է. «Զի թէպէտ բազում են առաքինութիւնք գորս գործեն մարդիկ, այլ կատարումն եւ գլուխ ամենայն առաքինութեանց՝ ողորմութիւնն է» (նույն տեղում, էջ 380)։

⁵⁵ Արցախ, էջ 157։

⁵⁶ Անդ։

պես էլ հեքիաթներում: «Փիս քէրը» հեքիաթում կան այսպիսի արտահայտություններ, որոնք են՝ «Աստուծ, յանի հինչ կընի՞, քըշըհանա յէր կէնանք տէսնանք՝ յէրգյինքյան իրէք հափուռ ցօրէն վէր տյառած, յօր օնէնքյ օտէնքյ»⁵⁷, «Աստուծ, յանի հինչ կընի՞, քըշըհանա յէր կէնանք տէսնանք՝ մէր արտը ծըլած»⁵⁸: Նույն ռճականությամբ Աստծուն ուղղված մեկ այլ խնդրանքի ենք հանդիպում «Իրէք քուվէրքը» հեքիաթում. «Աստուծ, յանի հիշ կինի՞, մին ղըզղան վէր քըցիս, էս տէսը-տէնը ածինքյ մաշը իփինքյ»⁵⁹: «Օխժը տըղան» հեքիաթում կարդում ենք. «Աստուծ, յանի հինչ կընի՞, մըզ էլ մին խօխա տաս, յանի էս ալլահան անլուզու մօկնէն օխտը ճօտ օնէ, մունք ըսկի մին նէլ չօնինքյ, թա միհէտ մունք էլ ուրուրուց ուրօրինքյ, մունք էլ խուխու սաս ըսկանանք»⁶⁰: «Աստուծ, յանի հինչ կընի՞» կամ «Աստված իբր ի՞նչ կլինի» խոսքը նշանակում է՝ Աստված, եթե իմ խնդրանքը կատարես, ապա ի՞նչ կլինի, ի՞նչ կփոխվի կամ ի՞նչ կպակասի Քեզանից: Սա բավականին տարածված արտահայտություն է, որով ոչ միայն մարդն է Աստծուն դիմում, այլև մարդը մարդուց որեւէ բան խնդրելու պարագայում գործածում է այս խոսքը, որն ավելի շատ ոչ թե խնդրելու, այլ համոզելու երանգներ է պարունակում:

«Օխժը տըղան» հեքիաթում հանդիպում ենք Աստծու անունը հիշատակող որոշ մեջբերումների, որոնցից մեկում ասվում է. «Պա էս հինչ պատիժ ա՛ր, էս հինչ Լստուծու կըրակ ա՛ր, վէր մէր կըլխէն վէր տըէ-ռավ»⁶¹: Պատմվում է աղքատ ու անզավակ ամուսինների մասին: Մի օր ամուսինը թուչի բնում երեք ձու է գտնում, բերում է տուն, երկուսն ուտում է, իսկ վերջինը կնոջ հորդորով տանում են հարեւանի թխսկան հավի տակ դնում, եւ քսանմեկ օր անց հարեւանը բացականչելով գալիս է եւ ասում, որ այդ ձվից մի օձ դուրս եկավ ու մյուս ճտերին կերավ: Վերոգրյալ մեջբերումը հարեւանի խոսքից է: «Աստծո կրակ» դարձվածքը նշանակում է փորձանք, պատիժ, փորձություն⁶², ինչպես նաեւ շար, դաժան մարդ, շարաճճի, շարժուն, անկարգ: Այստեղ դարձվածքը կիրառվում է առաջին իմաստով, այսինքն՝ վրա հասած փորձանքը վե-

⁵⁷ Անդ, էջ 140:

⁵⁸ Անդ:

⁵⁹ Անդ, էջ 162:

⁶⁰ Անդ, էջ 167:

⁶¹ Անդ:

⁶² Տէս Պ. ԲԵԳԻՐՅԱՆ, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւանի պետական համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2011, էջ 147:

րագրվում է Աստծուն: Աստծուց փորձվելու ժողովրդական ընկալման եւ դրա ճիշտ ու սխալ կողմերի մասին արդեն խոսել ենք «Լյւթութունը կօրչիլ չի» հեքիաթում տեղ գտած նույնանման արտահայտութեան կապակցութեամբ: Այնուհետեւ պատմվում է, որ այս խեղճ ամուսինները գնում են օձը տեսնելու եւ ապշահար են լինում, քանի որ օձը լեզու առած սկսում է խոսել իրենց հետ. «Ա հա՛ր, ա մա՛ր, յէս ծէր խօխան ում, ինձ ըսպանիք Վո՛ւշ, վէր ըսպանիք, Աստուծ ծըէզ էլ խօխա չի բըխշիլան»⁶³: Այս մարդիկ օձը տանում են իրենց տուն, երեխայի պես պահում են եւ ժամանակի հետ սկսում են նրան սիրել: Օձը մեծանալով մի օր հորն ասում է, որ ուզում է թագավորի աղջկա հետ ամուսնանալ, եւ այս խեղճ մարդը գնում է թագավորի պալատ՝ արքայադստեր ձեռքը խնդրելու համար: Երբ այս մասին թագավորն իմանում է, հրամայում է սպանել եւ մարմինը տանել-նետել տան դիմաց: Ծառաներն այդպես էլ անում են, եւ մինչ բոլոր հարեւանները սարսափած լացում էին, օձը վերակենդանացնում է այս խեղճ մարդուն եւ ստիպում, որ կրկին գնա թագավորի մոտ: Վերջինս մի շարք պայմաններ է դնում, որոնք, ի զարմանս իրեն, օձը կատարում է եւ ստիպված է լինում իր աղջկան կնութեան տալ⁶⁴: Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, սակայն հարսն իրեն տխուր ու դժբախտ է զգում: Ի հակադրութեւն այս տխրութեան՝ հեքիաթի հեղինակը հավելում է. «Ամմա դէ Ըստուծէն կուրծէրէն խառնըվէլ չըն, Աստուծ ամմէն հինչ չի մին դունումանց տամ, հալա ըշտեղ ա՛, հալա շատ պէն կա, վէր վէշ մինը գյուղում չի»⁶⁵: Այս խոսքերով կարծես հեղինակը փորձում է ունկնդրողին փոխանցված բացասական պատկերին հակադրել Աստծու գործերի անքննելիութեան գործոնը, որով ցանկանում է հայտնել, որ սա դեռ վերջնարդյունքը չէ, այլ պետք է առանց մեկնաբանութեան շարունակել լսել այս պատմութիւնը, քանի որ եթե Աստված որոշել է, որ այսպես պետք է լինի, ապա սրա համար կան պատճառներ, որոնց մասին դեռ պետք է պատմվի: Այնուհետեւ օձը դառնում է մարդ,

⁶³ Արցախ, էջ 167:

⁶⁴ Դիպաշարի նմանօրինակ տարերային հերթագայութիւնը, երբ անսպասելիորեն ալ ընթացքով են զարգանում դեպքերը, եւ զավեշտալի կամ կտրուկ կերպով փոխվում է հեքիաթի կենցաղային պատկերը, գործառական առումով Վ. Բախտինան անվանում է «անհետեւ (բացուրդային) առաջարկների եւ իրավիճակների ֆանտաստիկա» (В. Бахтина, Эстетическая функция сказочной фантастики. Наблюдения над русской народной сказкой о животных. Саратов, 1972, էջ 24:)

⁶⁵ Արցախ, էջ 170:

եւ որոշակի դեպքերի նկարագրություններից հետո հեքիաթն ունենում է բարի ավարտ⁶⁶: Վերջում հեղինակը, կրկին Աստծու անունը տալով, արտահայտում է իր միտքը, բայց այս անգամ այն իր բովանդակությամբ Աստծուն ուղղված ցանկություն է. «Ըստուծանա հինչ կօգյիմ. մին մը-էծ յաշիգ Վէր ընգէ, մաշան մին բէլուկ սիպտակ յըղօնէգյնէ տուս տը-էռնան, թըռչին սաղ ըշխարքավըս մին ինին, ամմէն տէղ խըղըղօթուն տանին, մէր ջահիլ-ջուհուլըն էլ փըսակվէ, խուխատար-թուռնատար, ծուռնատար-կուռնատար տըէռնա, էն տըղէն ու էն ըխճըգյանը նըման ուրան մուրազէն հըսնէ»⁶⁷: Հեղինակն Աստծուց խնդրում է, որ երկնքից արկղով լի աղավիններ իջնեն, թռչելով տարածվեն մոլորակով մեկ եւ ամենուր խաղաղություն տարածեն, իսկ երիտասարդներն ամուսնանան, հեքիաթի տղայի ու աղջկա պես իրենց նպատակին հասնեն, բազմաթիվ սերունդներ աշխարհ բերեն: Ինչպես հայտնի է Աստվածաշնչից, Սուրբ Հոգին ներկայացվում է աղավնու տեսքով⁶⁸, ինչպես նաեւ աղավնին ավետաբերն է, խաղաղության, սիրո, հույսի, մաքրության, անաղարտության խորհրդանիշն է, ուստի հեղինակը, Աստծուց աղավիններ խնդրելով, ցանկանում է, որ աշխարհում նրանք տարածեն վերոգրյալ առաքինությունները: Այս հեքիաթում, ինչպես նկատելի է, առկա են նախակերպարների արքեստիպային դրսեւորումներ՝ օձի եւ աղավինների գործողությունների միջոցով: Ի տարբերություն կենդանապատում կամ կենդանական հեքիաթների՝ այստեղ գործող օձը եւ խորհրդապատկեր աղավինն կենտրոնական միակ կերպարները չեն. դրանք բազմադրվագ դիպաշարի առանձին հատվածներն են փոխկապակցում՝ հեքիաթի տեսակի կառուցվածքային սկզբունքներին համապատասխան⁶⁹: Օձն ու աղավինն, գրական եւ գեղագիտական գործառույթից զատ, նաեւ աստվածաբանական շղթայակցության մեջ են՝ «խորագեւտ եղեք օձերի պես,

⁶⁶ Օձը (հաճախ՝ Օձամանուկը) հայ եւ համաշխարհային բանահյուսության ժողովրդական պոեմներում կրողն է ոչ միայն իմաստության, ինչպես հիշվում է Մենդոց գրքում, այլեւ խորամանկության, որոնք, որպես բնութենական հատկանիշներ, արխայիկ պատկերացումներում հավասարազոր են (տե՛ս Լ. ՄԿՐՏԶԱՆ, Կենդանակերպ տրիքստերի շուրջ միավորված հայկական հեքիաթների բովանդակային-կառուցվածքային առանձնահատկությունները, Բանբեր Նրեւանի համալսարանի, № 1 (22), Նրեւան, 2017, էջ 35):

⁶⁷ Արցախ, էջ 172:

⁶⁸ Տե՛ս Մատթ. Գ. 16, Հովհ. Ա. 32:

⁶⁹ Հեքիաթի չափանիշների եւ սյուժեի եռաստիճանակարգության մասին տե՛ս Н. КРАВЦОВ, Сказка как фольклорный жанр («Специфика фольклорных жанров». М., 1973, էջ 82–84):

եւ միամիտ՝ աղավինների նման»⁷⁰ ավետարանական մեջբերումի փոխաբերական շրջագծում:

«Օխտը ախպօր մադար քուրը» հեքիաթում պատմվում է մի մարդու եւ կնոջ մասին, որոնք, լինելով ոչ ունեւոր, բոլորի հանդեպ կամեցող, սրտաբաց էին. «Ըստուծէն օրըն էլ զարիբ, զօնաղ, հու պւտըհէս ա, տընէս ըն տօն, ուրանց իլած-չիլածան հուրումաթ ընէս»: Այսինքն՝ նրանք պանդուխտներին, օտարներին հյուրընկալում էին եւ հյուրասիրում: Այստեղ կրկին խոսվում է հյուրընկալության մասին, եւ ինչպես նախորդ հեքիաթներում արդեն անդրադարձել ենք, այն բնորոշ եւ ընդունված մշակույթ է արցախյանների ընտանիքներում, որն էլ իր գրական դրսևորումն է գտել բանահյուսական ստեղծագործություններում՝ մասնավորապես ներթափանցելով հեքիաթների մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ արցախյան ավելի քան մեկ տասնյակ հեքիաթներում առկա են կրոնական երանգավորում ունեցող մեջբերումներ, որոնք հիմնականում վերաբերում են քրիստոնեական կենցաղակերպին եւ մտայնությանը, Աստված-մարդ փոխհարաբերությանը: Այս հեքիաթներում առկա են բարոյախրատական ուղերձներ, որոնց միջոցով ունկդրին է փոխանցվում այն պատգամը, որ Աստված մարդուն հատուցում է իր գործերին համապատասխան. բարու դիմաց՝ պարգեւներ, չարի դիմաց՝ պատիժներ: Ինչպես նկատեցինք, մեր ուսումնասիրության նյութ հանդիսացած բոլոր հեքիաթներում գրական հերոսներն աստվածահաճո կերպարներ են եւ վերջում Աստծուց առատորեն պարգեւներ են ստանում, իսկ բացասական հերոսներն աչքի են ընկնում իրենց մեղսավոր ընթացքով, եւ հեքիաթների վերջում պատմվում է նրանց կործանման մասին: Աստված-մարդ փոխհարաբերության մեջ արցախյան հեքիաթներում անհատն Աստծուց խնդրում է, երախտագիտություն է հայտնում, նրան գանգատվում է, իսկ ավելի հազվադեպ նաեւ Աստծու անունը հիշատակում է մեկ այլ անհատին պատժելու, դիմացինին չարը կամենալու համար: Անեծքների նմանվող այս խոսքերը ոչ միայն հեքիաթներում, այլեւ արցախյան բանահյուսության այլ տեսակներում բավականին տարածում ունեն: Որոշ հեքիաթներում իրադարձությունների զարգաց-

⁷⁰ Մատթ. Ժ. 16:

ման, առանձին դեպքերի նկարագրությունների համար հիմք են ծառայել աստվածաշնչյան պատումները, առանձին խոսքերը: Այս հեքիաթներում քրիստոնեական արժեհամակարգի առկայությունը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Արցախը քրիստոնեական է, քանի որ հեքիաթներն արտահայտում են տվյալ ժողովրդի առօրյա կյանքի տարբեր դրսեւորումները: Հատկանշական է, որ հեքիաթներում հաճախ չար կերպարների համար հիմք են հանդիսանում տվյալ ժողովրդի թշնամիները կամ տվյալ բնակավայրում համընդհանուր հարգանք չվայելող պատմական կերպարները, սակայն մեր ուսումնասիրած որեւէ հեքիաթում բացասական կերպարի նկարագրության մեջ այլ ազդեցությունների կամ որեւէ անհատի մասին ուղիղ կամ թվացյալ հիշատակություններ չկան: Ուստի տրամաբանական է կարծել, որ արցախյան հեքիաթներն ստեղծվել են այն ժամանակաշրջանում, երբ այդ վայրերում ապրում էին միայն հայեր:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արցախ, բանահյուսություն, խաղիկներ, հեքիաթ, Շուշի, Արցախի պետական համալսարան:

РЕЗЮМЕ

Общеизвестно, что сказки являются одним из наиболее важных и богатых материалом жанров фольклора.

В рамках представленной статьи мы изучили и объединили сказки, встречающиеся в фольклоре Арцаха, в которых присутствуют христианские представления, образы и эпизоды с чисто религиозными мотивами. Таким образом, мы рассмотрели и провели сравнительный анализ сказок, а также изучили их генеалогию и семантику. Следует отметить, что в Арцахе не мало таких сказок с ярко выраженными христианскими и назидательными мотивами.

В данной статье мы также стремились выяснить, какую роль играет христианское мировоззрение в сказках, вошедших в арцахский фольклор, и насколько они идентифицируются со сказками, распространенными в других армянских регионах. Дело в том, что нравственные послы, содержащиеся

в арцахских сказках, встречаются и в фольклоре других регионов исторической Армении.

Наличие религиозных мотивов в арцахских сказках и фольклоре в целом дает возможность сделать вывод о том, что арцахский народ жил и живет с христианской системой ценностей и мировоззрением, поскольку сказки, как эпический жанр народного творчества, помимо вымысла и воображения, создаются на основе различных реальных проявлений внутреннего духовного и душевного мира, чаяний и быта народа.

Данная статья подготовлена в рамках краткосрочной грантовой программы, посвященной духовному и культурному наследию Арцаха, под эгидой исследовательского центра «Христианский Восток» Зальцбургского университета.

SUMMARY

It is known that the fairy tales are one of the most important and widespread sections of folklore.

Within the framework of the presented article, we have studied and combined the fairy tales found in the folklore of Artsakh, in which there are Christian perceptions, episodes with religious motifs. Thus, we have examined them and made a comparative analysis, as well as studied their genealogy and significance. It is worth noting that the number of such tales is about a dozen.

Within the framework of this article, we aimed to find out what role Christian perceptions have in the tales that are part of Artsakh folklore and to what extent they identify with the tales born in other Armenian settlements.

The presence of religious motifs in Artsakh fairy tales and folklore in general gives an opportunity to conclude that the people of Artsakh lived and lives with a Christian value system and worldview, as the fairy tales are created on the basis of various manifestations of folk life.

It is also important to note that the moral ideas contained in these fairy tales of Artsakh are also found in the folklore of other regions of Armenia.

This article was prepared within the framework of a short-term grant program on the spiritual and cultural heritage of Artsakh by the Christian East Research Center of the University of Salzburg.